ՆԵԵՏ

1. Տ՛ր, պահե՛ զիս Սուրբ խաչիդ
Արյունին տակ, (2)
Տ՛ր, պահե՛ զիս թանկագին
Արյունիդ տակ, (2)
Որ նետերն չարի չհասնին,
Չհարվածեն իմ խեղճ հոգին
Ու չավերեն գործդ անգին,
Տ՛ր, պահե՛ զիս արյունիդ տակ:
(2)

2. Տ՛ր, պահե՛ զիս Սուրբ խաչիդ
Արյունին տակ, (2)
Տ՛ր, պահե՛ զիս թանկագին
Արյունիդ տակ, (2)
Որ ալիքներն մեղքի ծովուն
Չխորտակեն իմ խեղճ նավուն,
Այլ ապահով հասնիմ ես տուն,
Տ՛ր, պահե՛ զիս արյունիդ տակ:
(2)

3. Տ՛ր, պահե՛ զիս Սուրբ խաչիդ
Արյունին տակ, (2)
Տ՛ր, պահե՛ զիս թանկագին
Արյունիդ տակ, (2)
Որ սատանան չհաջողի
Խափանել երթը հավատքին,
Այլ ապահով հասնիմ Քեզի,
Տ՛ր, պահե՛ զիս արյունիդ տակ:
(2)

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025